«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

12 նոյեմբերի, 2026 թ. N 20-L

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կանոնադրությունը 8.1 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության հաշվապահական հաշվառման հանձնաժողովի 2027 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված
«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2026 թ. նոյեմբերի 12-ի N 20 - Լ որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»

հասարակական կազմակերպության

հաշվապահական հաշվառման հանձնաժողովի

2027 թվականի գործունեության տարեկան ծրագիրը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի Աուդիտորների և Փորձագետ Հաշվապահների Պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2027թ.-ի գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) կազմվել է նպատակ ունենալով ապահովել Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված գործառույթների և նպատակների արդյունավետ իրագործումը:

ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ և ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գործունեության ծրագրի հիմքում դրված են Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված գործառույթները և նպատակները:

Գործունեության ծրագիրը կազմելիս նախատեսվող միջոցառումները և դրանց կատարման ժամկետները պլանավորվել են՝ ելնելով յուրաքանչյուր կոնկրետ գործառույթի բնույթից և առկա տեխնիկական և մարդկային ռեսուրսներից:

Հանձնաժողովի կողմից այլ գործառույթների իրականացման համար կոնկրետ միջոցառումներ և ժամկետներ սահմանված չեն՝ դիտարկելով դրանք որպես ընթացիկ աշխատանքներ, որոնք կիրականացվեն ըստ անհրաժեշտության:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

h/h	Գործառույթ	Միջոցառում	Ժամկետ
1	Հաշվապահական հաշվառման ոլորտին վերաբերող ՇՄՁ դասընթացների կազմակերպում	ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների բարդ պահանջների և փոփոխությունների (ներառյալ հաշվային պլանի փոփոխությունները) պարզաբանումներ ՇՄՁ դասընթացների միջոցով	1-2 դասընթաց յուրաքանչյուր եռամսյակում
2	Հաշվապահական հաշվառման ոլորտում խնդրահարույց հարցերի քննարկում	Քննարկումների կազմակերպում «կլոր–սեղանի» ձևաչափով	1-2 թեմատիկ քննարկում յուրաքանչյուր կիսամյակում
3	Համագործակցություն աուդիտորական գործունեության և հարկային հանձնաժողովների հետ	Համատեղ քննարկումներ հաշվահական և հարկային հաշվառումները կարգավորող իրավական ակտերում փոփոխությունների վերաբերյալ	Տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության
4	Հաշվապահական հաշվառման ոլորտում առկա խնդրահարույց հարցերի վերաբերյալ	Պալատի անդամների կողմից առաջադրված համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի	Ըստ ներկայացված հարցադրումների, ոչ ուշ քան

	պարզաբանումների և մասնագիտական կարծիքների տրամադրում	վերաբերյալ շրջաբերական նամակների հրապարակում	հարցադրմանը հաջորդող 1 ամսվա ընթացքում
5	Հաշվապահական հաշվառման ոլորտում բարեփոխումների աջակցման նպատակով այլ կառույցների հետ քննարկումներ	Մասնագիտական քննարկումներ ՀՀ Ֆինանսների Նախարարության կամ այլ պետական կառույցների, ինչպես նաև մասնավոր ընկերությունների (օրինակ՝ Հայկական Ծրագրեր) ներկայացուցիչների հետ	Տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության

Հաշվապահական հաշվառման

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մովսիսյան